

## Ազգային գրադարանային շաբաթ Ապրիլի 13-20

Շաբաթի կարգախոսն է՝ *Պահպանիր և հիշիր*

Ազգային գրադարանային շաբաթի շրջանակներում Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ Սպասարկման բաժնի, ընդհանուր ընթերցասրահի աշխատակիցները ապրիլի 15-ին կազմակերպել էին «Բանաստեղծն եմ Մասիսի, ինձ աստվածն է ճանաչում» խորագրով հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյակին նվիրված գրականության ցուցադրություն: Ելույթ ունեցավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ Սամվել Մուրադյանը: Միջոցառմանը ներկա էր նաև բանաստեղծի որդին՝ Սիփան Շիրազը: